

---

---

## ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՑԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՈ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

### Ս. Ռ. ԱՎԵՏՅԱՆ

Լեզվի պատմական զարգացման ընդհանուր օրինաշափություններին ուղաղություն է դարձրել դեռևս Ա. Շլայխերը: Նա նշում է, որ ինչպես ցեղակից, այնպես էլ ոչ ցեղակից լեզուների պատմական զարգացման ընթացքում տեղի են ունենում միանման փոփոխություններ, գործում են լեզվական ընդհանուր միտումներ<sup>1</sup>: Հետազայում լեզվական ընդհանուր միտումներ բացահայտելու բազմաթիվ փորձեր են արվել տարբեր լեզվաբանների կողմից<sup>2</sup>: Ընդհանուր առմամբ, լեզվաբանների մեծ մասը գտնում է, որ լեզվի պատմական զարգացման մեջ գործում են զանազան և հաճախ միմյանց հակադիր լեզվական միտումներ: Դրանով իսկ՝ լեզվական միտումները սահմանափակում, փոխհավասարակշռում են միմյանց գործողության արդյունքը: Այդպիսի ընդհանուր միտումներից կարելի է նշել լեզվական խնայողության, պարզեցման ու միօրինակացման, արտահայտչականության, տարրերակման և այլ դրսերումները: Այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ զանազան հանգամանքների ազդեցությամբ միևնույն միտումի իրական դրսերումները, վերջնական արդյունքները կարող են տարբեր լինել: Մյուս կողմից՝ գրեթե բոլոր լեզվաբանները իրավացիորեն գտնում են, որ լեզվական ընդհանուր միտումները արտահայտում են լեզվական որոշ տիպի փոփոխությունների հնարավորություններ, բայց պարտադիր անհրաժեշտության բնույթը չունեն: Այդ պատճառով մենք կարող ենք սահմանել լեզվական միտումների արդյունքը միայն post factum, բայց չենք կարող կանխատեսել ապագայի համար, որովհետև տվյալ հնարավորությունը մի լեզու կարող է օգտագործել, իսկ մեկ այլ լեզու՝ ոչ: Այդ կախված է զանազան գործուներից: Լեզվական միտումների էությունը պարզելիս պետք է հաշվի առնել հնչյունական և ձևաբանական համակարգերին բնորոշ միտումների տարբերությունը: Ինչպես նշում է Ժ. Վանդրիեսը, ձևաբանական փոփոխությունը միշտ բխում է տվյալ կոնկրետ կիրառությունից և դրանով իսկ՝ ունենում է սահմանափակ տարածում: Այդ պատճառով նոր առաջացած ձևերին գուգահեռ լեզվի մեջ շարունակում են պահպանվել իին ձևեր<sup>3</sup>: Բացի այդ, մեր կարծիքով, ձևաբանական փոփոխությունները հնչյունական փոփոխությունների համեմատությամբ

<sup>1</sup> Տե՛ս Բ. Ա. Սերեբրեննիկօվ, Վերоятностные обоснования в компаративистике, Մ., 1974, էջ 8:

<sup>2</sup> Այդ տեսակետների պատմավերլուծական ակնարկը տրված է Սերեբրեննիկովի հշված աշխատության մեջ, էջ 7-41:

<sup>3</sup> Տե՛ս Խ. Վանդրիես, յազակ, Մ., 1937, էջ 151-154, 157-158:

ունեն մի կարևոր առանձնահատկություն ևս. Եթե ընդհանուր պատմական հնչյունափոխությունների դեպքում գրեթե միշտ հնարավոր է լինում պարզել բացառությունների ու շեղումների պատճառները, ապա ձևաբանական փոփոխությունների դեպքում այդ ոչ միշտ է հնարավոր: Օրինակ, դժվար է բացատրել, թե ինչու գրաբարյան անցանել, հասանել, իջանել և համանման բայերից ծագած ժամանակակից հայերենի անցանել, հասանել, իջանել բայածները բուն հրամայականի եզակի թվի ձևը կազմում են նոր օրինաչափությամբ՝ **անցի՛ր, հասի՛ր, իջի՛ր** և այլն, մինչդեռ կազմությամբ նույն տիպին պատկանող գրաբ. **տեսանել** բայից ծագած ժամ. հայ. **տեսանել** բայը պահպանել է գրաբարյան ձևը՝ **տե՛ս:** Զեարանական փոփոխությունների դեպքում առկա մի շարք բացառություններ ու շեղումներ ժ. Վանդրիեսը փորձում է բացատրել տվյալ քերականական ձևի հաճախագործածության հանգամանքով: Ըստ նրա՝ ավելի քիչ գործածական ձևերը ավելի հեշտությամբ են ենթարկվում համարանական փոփոխության, իսկ առավել գործածական ձևերը ավելի դժվարությամբ կարող են մոռացնել տրվել և փոխարինվել համարանական ձևերով: Սակայն միաժամանակ Վանդրիեսը նշում է այնպիսի դեպքեր, որոնց համար դժվարանում է որևէ բացարություն գտնել<sup>4</sup>: Կարծում ենք, գրաբարյան **տե՛ս** հրամայականի ձևի պահպանվելը ևս հնարավոր չէ բացատրել հաճախագործածությամբ, քանի որ ճիշտ չէր լինի ասել, թե **տեսանել** բայը **հասանել, իջանել, անցանել** բայերից ավելի գործածական է: Իհարկե, ասվածը չի նշանակում, թե ձևաբանական փոփոխությունները կամայական բնույթ են կրում, այլ դա նշանակում է, որ տվյալ ձևաբանական փոփոխությունը սահմանափակող, խոչընդոտող զանազան պատճառները միշտ չեն, որ հնարավոր է բացահայտել: Այդուհանդեռձ, հնչյունական և ձևաբանական միտումները լեզվի պատմական զարգացման ընթացքում միմյանցից անկախ չեն գործում, այլ, ընդհանուր առնամբ, հնչյունական համակարգին բնորոշ զանազան միտումները հաճախ նպաստում կամ խոչընդոտում են ձևաբանական համակարգի միտումների դրսնորմանը: Հնդկալուսկան լեզուների պատմությունը բնորոշ փաստեր է ընձեռում այդ երևույթի լուսաբանման համար: Ինչպես համոզի կերպով ցույց են տվել Բ. Սերեբրեննիկովը և Ս. Գուսմանը, հ.-ե. լեզուների հետագա փոփոխությունների միտումները նախ և առաջ պայմանավորված են եղել նախալեզվից ժառանգված համակարգի ներքին հակասություններով<sup>5</sup> (հատկանիշներ, որոնք բացակայում են կցական տիպի լեզուներում, և, ըստ Սերեբրեննիկովի, դրանով է բացատրվում կցական լեզուների քերականական կառուցվածքի հարաբերական կայունությունը դարերի ընթացքում<sup>6</sup>): Սակայն հ.-ե. ձևաբանական համակարգից բխող խնայողության, միօրինակացման, պարզեցման և այլ միտումների դրսնորմանը շատ դեպքերում նպաստել կամ խոչընդոտել են զանազան

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 152-154:

<sup>5</sup> Տե՛ս **Б. А. Серебренников**, Причины устойчивости агглютинативного строя и вопрос о морфологическом типе языка, Морфологическая типология и проблема классификации языков, М.-Л., 1965, էջ 9-11, **М. М. Гухман**, Историческая типология и проблема диахронических констант, М., 1981, էջ 70-75:

<sup>6</sup> Տե՛ս **Б. А. Серебренников**, Причины устойчивости..., էջ 9-11:

հնչյունական փոփոխությունները: Այսպես, հանրահայտ իրողություն է, թե ինչպիսի մեծ դեր են խաղացել հնչյունական համակարգում կատարված փոփոխությունները (Երկար և կարճ ձայնավորների հակադրության փոփոխինումը փակ և բաց ձայնավորների հակադրությամբ՝ դրանից բխող հետևանքներով հանդերձ, բառավերջի որոշ հնչյունների անկումը և այլն) ոռնանական լեզուներում լատիներենի հոլովման համակարգի քայլայնան գործում: Նմանապես միօրինակացման ու պարզեցման միտումի իրականացմանը մեծ չափով նպաստել է գերմանական լեզուներում շեշտի հետևանքով վերջնավանկերի բուլացման ու անկման երևույթը: Բայց մյուս կողմից՝ բառահիմքերի ընդհանրացման միտումի դրսւորմանը որոշակիորեն խոչընդոտել են ձայնափոփոխյունը (Umlaut) և ձայնավորների ճեղքումը (Vocalbrechung): Իհարկե, լեզուն ձգտել է մեխանիկորեն չենթարկվել նշված խոչընդոտող հնչյունական միտումներին: Այսպես, ոչ միայն ձայնափոփոխյան և ձայնավորների ճեղքման, այլև նախալեզվից ժառանգված ձայնարձի կիրառության ոլորտը անհրաժեշտաբար սահմանափակվել է գերմանական լեզուների պատմական զարգացման ընթացքում: Ընդհանուր առնամբ, որտեղ ներքին թեքումը հանգամանքների թերումով դարձել է հիմնական իմաստատարբերակիչ միջոց, այն պահպանվել է, հաճախ էլ տարածվել իր սկզբնական սահմաններից դուրս: Օրինակ՝ գերմաներենում ձայնափոփոխյունն այդպիսի դեր է կատարում՝ հանդես գալով որպես մի խումբ գոյականների հոգնակիալերու ցուցիչ, ինչպես՝ **die Mutter** «մայր» – **die Mütter** «մայրեր», **die Tochter** «դուստր» – **die Töchter** «դուստրեր» և այլն<sup>7</sup>: Այդպես էլ ձայնարձը կարևոր դեր է խաղում գերմաներենի ուժեղ բայերի ներկայի և պրետերիտի հիմքերի տարբերակման հարցում. հմնտ. **wir helfen** «մենք օգնում ենք» և **wir halfen** «մենք օգնեցինք» և այլն: Ընդհակառակը, այն դեպքերում, որտեղ ներքին թեքումը եղել է տվյալ նշանակելիի արտահայտման օժանդակ նշանակիչ, լրացույցի նշույթ, լեզուն վաղ թե ուշ ձգտել է հարացույցի ներսում հիմքերի ընդհանրացման, և այժմ ևս այդ միտումը շարունակվում է: Դրա դրսւորումը կարելի է տեսնել ոչ միայն անգլերենի և գերմաներենի պատմական զարգացման ընթացքում պրետերիտի եզակի և հոգնակի թվի ձևերում նեղակի կամ հոգնակի հիմքի ընդհանրացմանը<sup>8</sup>, այլև ժամանակակից գերմաներենի որոշ բարբառներում ու խոսվածքներում ներկայի ձևերում ձայնափոփոխյան և ձայնավորների ճեղքման հետևանքով առաջացած հերթագայությունների վերացման մեջ, ինչպես՝ **ich geb** «տալիս եմ», **du gebst** «տալիս ես», **er geibt** «տալիս է» (փոխ.՝ **ich gebe**, **du gibst**, **er gibt**)<sup>9</sup>:

Այսպիսով, թերված օրինակներից հետևում է, որ անհրաժեշտ գործառության ծանրաբեռնվածություն չունեցող նշույթերը լեզվի հետագա զարգացման ընթացքում կամ ճեղք են բերում մի նոր ինքնուրույն գործառույթ, կամ անհետանում են: Մյուս կողմից, ինչպես արդեն նշել ենք, լեզվի մեջ հաճախ

<sup>7</sup>Տե՛ս **О. И. Москальская**, История немецкого языка, Л., 1959, էջ 143-144:

<sup>8</sup>Տե՛ս **Б. А. Ильиш**, История английского языка, М., 1958, էջ 322-325, **О. И. Москальская**, նշվ. աշխ., էջ 235-239:

<sup>9</sup>Տե՛ս **Ж. Вандриес**, նշվ. աշխ., էջ 156, **В. М. Жирмунский**, История немецкого языка, М., 1965, էջ 165:

խնայողության և միօրինակացման միտումներին գուգահեռ կարող են գործել հակադիր միտումները, ինչպիսիք են արտահայտչականության, տարրերակման և այլ միտումները: Օրինակ՝ դրա արդյունք պետք է համարել հ.-ե. լեզուների պատճական զարգացման ընթացքում նորանոր կերպաժամանակային ձևերի առաջացումը: Բանն այն է, որ իրականության միևնույն հարաբերությունները նարդվային գիտակցության պատճական զարգացման ընթացքում իրենց նույնության և տարրերության տեսակետից կարող են գիտակցվել տարրեր կերպ, ինչի հետևանքով կարող են առաջանալ իրականության լեզվական տարրեր դրսերումներ: Այսպես, ժամանակակից անգլերենի շարունակական և անորոշ (ընդհանուր) կերպի ներկաներն ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարրերություններ: Ընդհանրության շնորհիվ է, որ այժմ այդ երկու ձևերով դրսերվող իմաստները նախապես արտահայտվում էին մեկ ընդհանուր ներկայի ձևով: Սակայն հետագայում, երբ կոնկրետ և ընդհանրական ներկաների կերպիմաստային տարրերությունն առաջին պլան է մղվել, այդ հանգեցրել է նոր կերպաժամանակային ձևի առաջացման՝ տվյալ պահին կատարվող, կոնկրետ ներկայի իմաստն արտահայտելու համար: Այդպիսի իմաստային տարրերակման պահանջով են առաջացել նաև նոր պերֆեկտի, ապառնիի և այլ ժամանակաձևները հ.-ե. լեզուներում: Ինչպես գիտենք, լեզվի պատճական զարգացման ընդհանուր միտումներից մեկն էլ այն է, որ նոր քերականական ձևեր են առաջանում սկզբնական լիիմաստ բառերի իմաստային նրազնման և քերականական ցուցիչների վերածվելու հետևանքով: Ընդ որում, այս դեպքում ևս լեզվական ընդհանուր միտումի իրական դրսերումները և վերջնական արդյունքները զանազան գործունների ազդեցությամբ կարող են տարրեր լինել: Այդ առումով, կարծում ենք, տվյալ լեզվի տիպարանական առանձնահատկությունները նույնպես զգալի շափով սահմանափակում և պայմանավորում են քերականական ձևերի առաջացման և պատճական զարգացման հնարավորությունները: Այդ երևույթը հասուլ քննության կարիք է զգում, ուստի այստեղ կուգենայինք մի փոքր ավելի հանգամանորեն խոսել այդ մասին: Այսպես, ոռմանական լեզուների պատճահամեմատական քերականության մեջ վաղուց հաստատված է, որ, օրինակ՝ ֆր. **j'ai chanté** «երգել եմ», իսպ. **yo he cantado** «երգել եմ» և այլ բայաձևերն առաջացել են լատ. **habeo cantatum** սկզբնամկից, իսկ ֆր. **je chanterai** «երգելու եմ», իսպ. **yo cantare** «երգելու եմ» և այլ բայաձևերը՝ լատ. **cantare habeo** սկզբնամկից: Սակայն հետազոտողներն ուշադրություն չեն դարձրել այն հարցին, թե ինչու միևնույն **habere** «ունենալ» բայը, դառնալով քերականական ցուցիչ, մի դեպքում տվել է վերլուծական, իսկ մյուս դեպքում՝ համադրական բայաձև: Ընդ որում, եթե ֆրանսերենի պարագայում հնարավոր է ենթադրել, որ գուցե հարցական նախադասությանը բնորոշ շրջուն շարադասությունը և կամ ժխտական նախադասության դեպքում օժանդակ բայի և դերբայի միջև հանդես եկող ժխտական մասնիկն է խոչընդոտել համադրական ձևի առաջացմանը (հմնտ. ֆր. II a chante. «Նա երգել է»: A-t-il chante? «Նա երգե՞լ է»: Il n'a pas chante. «Նա չի երգել»), ապա իսպաներենում համադրական ձևի առաջացմանը խանգարող ոչ մի գործոն չի եղել, քանի որ թե՛ հաստատական և թե՛ հարցական ու ժխտական նախադասություններում օժանդակ

բայր դերբայից չի միջարկվում որևէ բառով կամ մասնիկով (հմմտ. El **ha cantado**. «Նա երգել է»: **Ha cantado** ե՞լ? «Նա երգե՞լ է»: El no **ha cantado**. «Նա չի երգել»): Մեր կարծիքով, միևնույն habere «ունենալ» բայից առաջացած քերականական ցուցիչի մի դեպքում համադրական, մյուս դեպքում վերլուծական եղանակով կիրառությունը պայմանավորված է հ.-ե. լեզուների սիխարանական մի շատ կարևոր առանձնահատկությամբ. ի տարբերություն սեմական, կովկասյան և այլ լեզուների՝ նախամասնիկավորումը՝ որպես քերականական արտահայտության միջոց, բնորոշ չէ հ.-ե. լեզուներին, այլ քերականական քերույթները, որպես կանոն, ավելանում են բարի վերջից: Իհարկե, կերպաժամանակային հիմքերի կազմության դեպքում հանդիպում են համադրական տիպի քերականական նախամասնիկներ (հմմտ. հայերեն **կորեմ** ձևում **կ** եղանակից կամ ոռուերեն **հապիշ** ձևում կերպաժամանակային իմաստ արտահայտող **հա** նախածանցը և այլն), սակայն դրանք ընդհանուր հիմքակազմության ցուցիչներ են և ոչ թե ներհարացույցային հակադրություն արտահայտող քերույթներ: Իսկ բուն քերույթները հնդեվրոպական լեզուներում բացառապես վերջադրական մասնիկներ են: Ըստ այդմ՝ ֆր. **j’ai chanté**, իսպ. **yo he cantado** «երգել եմ» և այլն ձևերում խոնարհվող օժանդակ բայր անցյալ դերբային ձուլվելու դեպքում կառաջացներ հնդեվրոպական լեզուներին տիպաբանական տեսակետից խորք նախաթերույթավոր խոնարհման հարացույց: Կարծում ենք, համանման որիշ փաստեր ևս վկայում են այն մասին, որ, իրոք, համապատասխան քերականացվող կապակցության մեջ օժանդակ բառի շարադրասությունը լիմաստ բառի նկատմամբ կարևոր դեր է խաղացել մի կողմից համադրական, մյուս կողմից վերլուծական քերականական ձևերի առաջացման հարցում: Օրինակ՝ ոռմանական որոշ լեզուներում՝ ոռմիներենում և սարդիներենում, ապառնի ժամանակն առաջացել է ոչ թե անորոշ դերբայ + օժանդակ բայ, այլ օժանդակ բայ + անորոշ դերբայ կապակցությունից, որի հետևանքով ստացվել են վերլուծական քերականական ձևեր. հմմտ. ոռում. **voi canta** «երգելու եմ», **vei canta** « երգելու ես » և այլն, սարդիներեն **depo kantare** «երգելու եմ» (լատ. **debeo cantare** -ից) և այլն<sup>10</sup>: Անշուշտ, տիպաբանական նշված առանձնահատկությամբ և օժանդակ բայի շարադրասությամբ է բացարկում նաև մի կողմից ուկրաիներեն **ходити**, **любіти** ապառնի համադրական ձևերի առաջացումը, մյուս կողմից՝ ոռու. **буду ходить**, **буду любіти** ապառնի վերլուծական ձևերի առաջացումը: Մեր տեսակետը հաստատող համապատասխան փաստեր ենք գտնում նաև ոչ հ.-ե. լեզուներում: Այսպես, կցական տիպի ուգրա-ֆիննական լեզուներում նույնպես քերականական քերույթները, որպես կանոն, ավելանում են բառի վերջից, որը դարձյալ պայմանավորված է այդ լեզուների տիպաբանական առանձնահատկությամբ: Ընդ որում, ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ուգրա-ֆիննական լեզուներում նույնպես քերականական քերույթները, որպես կանոն, ավելանում են բառի վերջից, որը դարձյալ պայմանավորված է այդ լեզուների տիպաբանական առանձնահատկությամբ: Ընդ որում, ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ուգրա-ֆիննական լեզուներում նույնպես քերականական քերույթները, որպես կանոն, ավելանում են բառի վերջից, որը դարձյալ պայմանավորված է այդ լեզուների տիպաբանական առանձնահատկությամբ: Ընդ որում, ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ուգրա-ֆիննական լեզուներում նույնպես քերականական քերույթները, որպես կանոն, ավելանում են բառի վերջից, որը դարձյալ պայմանավորված է այդ լեզուների տիպաբանական առանձնահատկությամբ: Ընդ որում, ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ուգրա-ֆիննական լեզուներում նույնպես քերականական քերույթները, որպես կանոն, ավելանում են բառի վերջից, որը դարձյալ պայմանավորված է այդ լեզուների տիպաբանական առանձնահատկությամբ:

<sup>10</sup>Տե՛ս **М. В. Сергиевский**, Введение в романское языкознание, М., 1952, էջ 242, **Б. А. Серебренников**, Вероятностные ... , էջ 197, 200:

կողմից համադրական քերականական ձևերի առաջացումը: Այսպես, ֆիններեն **olen lukanut** «կարդացել եմ», **olel lukanut** «կարդացել ես» և այլն ձևերում խոնարհվող օժանդակ բայր, նախորդելով դերբայի անփոփոխ ձևին, տվել է անցյալի վերլուծական ձև, մինչդեռ առանձին խոսվածքներում նույն բաղադրիչների հակառակ շարադասության դեպքում առաջացել են անցյալի համապատասխան համադրական ձևեր, ինչպես **kullolen** «լսել եմ» (**kullut olen** -ից) և այլն<sup>11</sup>: Նմանապես այն հանգամանքը, որ ուզրաքիններական լեզուներում առաջացել են բազմաթիվ նոր երկրորդական հոլովներ, կարծում ենք, կարելի է բացատրել այդ լեզուներում մեծաթիվ հետադաս կապերի առկայությամբ, որոնք, հեշտությամբ ձուլվելով բառահիմքին, դարձել են հոլովական թեքույթներ՝ ի տարբերություն հ.-ե. լեզուների, որտեղ հիմնականում գերակշռում են նախորդները, որոնք տիպարանական տեսակետից չեն կարող հոլովական թեքույթների վերածվել: Այդ առումով ուշագրավ է, որ, օրինակ՝ լիտվերենում և իրանական որոշ լեզուներում մի քանի հետադաս կապեր, վերջից ձուլվելով բառին, դարձել են հոլովական թեքույթներ<sup>12</sup>: Դրանից կարելի է ենթադրել, որ հ.-ե. լեզուներում նույնպես, եթե նախորդների փոխարեն մեծ կիրառություն ստանային հետադաս կապերը, նախալեզվից ժառանգված հոլովման համակարգի քայլայման գործնքացը ցեղակից լեզուներում կարող եր զգալի չափով փոխականարկակշռվել նոր հոլովական թեքույթների առաջացմամբ: Վերջապես, կուզենայինք ուշադրություն դարձնել մի կարևոր դեպքի վրա նույնպես: Կարծում ենք, տիպարանական տեսակետից հ.-ե. լեզուներին խորք ձևերի առաջացումը կանխելու միտումից է բխում նաև այն հանգամանքը, որ ֆրանսերենի անշեշտ անձնական դերանունները (**je**, **tu** և այլն) նախադաս թեքույթների տեսքով չեն միանում բայաձևերին, թեև իրականում միայն բայական դիմորոշ ցուցիչների դեր են կատարում և լեզվում ուրիշ գործառույթ չունեն (հնմտ. **Je viens** «ես գալիս եմ», **tu viens** «դու գալիս ես» և այլն): Մինչդեռ, օրինակ՝ արաքերենում, որտեղ տիպարանական տեսակետից քերականական թեքույթները բարին կարող են ավելանալ թե՛ սկզբից և թե՛ վերջից, միևնույն անձնական դերանուններից ծագող դիմորոշ թեքույթները (**ta**, **na** և այլն) անկատար կերպի բայաձևերին միացել են սկզբից, իսկ կատարյալ կերպի բայաձևերին՝ վերջից՝ երկու դեպքում էլ առաջացնելով համադրական թերականական ձևեր<sup>13</sup>: Օրինակ՝ արաք. **kataba** «գրել» բայից **katabta** «դու գրեցիր», **katabna** «մենք գրեցինք», մյուս կողմից՝ **taktubu** «դու գրում ես» և **naktubu** «մենք գրում ենք» և այլն:

Այսպիսով, վերը կատարված քննության շնորհիվ մենք հանգում ենք հետևյալ եզրակացության. անշուշտ, տարբեր լեզուների պատմական զարգացման ընթացքում գործում են համընդհանուր միտումներ, սակայն

<sup>11</sup> Ст. К. Е. Майтинская, Историко-сопоставительная морфология финно-угорских языков, М., 1979, էջ 50:

<sup>12</sup> Ст. М. М. Гуман, նշվ. աշխ., էջ 94, М. Н. Петерсон, Очерк литовского языка, М., 1955, էջ 65, В. Амбразас и др., Грамматика литовского языка, Вильнюс, 1985, էջ 90, А. Мейе, Сравнительный метод в историческом языкознании, М., 1954, էջ 87:

<sup>13</sup> Ст. Б. М. Гранде, Курс арабской грамматики в сравнительно - историческом освещении, М., 1963, էջ 181-182, 174:

լեզվական միևնույն միտումի իրական դրսորումները տարբեր լեզուներում կարող են չափազանց տարբեր լինել: Ընդ որում, այդ տարբերությունները կարող են առաջանալ ամենաբազմազան գործուների ու հանգամանքների ազդեցությամբ: Ուստի լեզվական միտումների ընդհանուր բնույթը ընդունելով հանդերձ՝ չի կարելի անտեսել դրանց դրսորման պայմանների տարբերությունը: Այդ առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ, ճիշտ է, լեզվի պատմական զարգացման ընթացքում նախկին տիպարանական առանձնահատկությունները հաճախ փոփոխվում են՝ հանգեցնելով տվյալ լեզվի կառուցվածքային տիպի փոփոխության, բայց մյուս կողմից որոշ տիպարանական առանձնահատկություններ սահմանափակում են քերականական ձևերի առաջացման ու պատմական զարգացման հնարավորությունները: Մասնավորապես, տվյալ լեզվի տիպարանական առանձնահատկությամբ պայմանավորված՝ քերականացվող օժանդակ բառի շարադասությունը լիմիմաստ բառի նկատմամբ վճռորոշ դեր է խաղում քերականական ձևերի վերլուծական կամ համադրական տիպի առաջացման հարցում:

**С. Р. АВЕТЯН – Роль типологических особенностей в реализации общих тенденций исторического развития языка.** – В статье рассматривается вопрос о том, что конкретные реализации общих тенденций исторического развития языка могут быть не одинаковыми, в зависимости от различных факторов и обстоятельств, ограничивающих и определяющих характер и направление исторических изменений в языковой системе. По мнению автора, одним из таких важных факторов является порядок слов. В частности, препозиция или постпозиция вспомогательного слова по отношению к полнозначному, основному слову, в соответствии с типологическими особенностями данного языка, обусловливает синтетический или аналитический характер возникающих грамматических форм.